# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության  Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 ,
darpas.lori@mta.gov.am

N 104
11 *հուլիս 2016թ*.

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ եմ ներկայացնում Դարպաս համայնքի ղեկավարի թիվ  30-61 որոշումները
 և թիվ 8 կարագադրությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Արմեն Ալոյան**



*Կատ. Համայնքի ղեկավարի օգնական՝ Դ. Վարդանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, (0322) հեռ. 6-06-24

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» ապրիլի. 2016թ. N 30.

## 06-033-0051-0018 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԻԿՏՈՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով քաղաքացի Վ. Մարուքյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը 11/04/2014թ. սեղանամատյան թիվ 1787, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 04,04,1991թ. թիվ 2 որոշումը, ՄԵԼ և ՄԻԼ գեոդեզիային և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կազմած հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով , ՀՀ ՀՕ 60-րդ ը 64-րդ հոդվածով, Ինքնակամ կառուցված շենքի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 28-ի թիվ 2387-Ն որոշմամբ*

### *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-033-0054-0003 ծածկագրի տակ գտնվող 0.10955հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1985-95թթ. կառուցված 282,55քմ. մակերեսով բնակելի տան, կառուցված 7,39քմ մակերեսով հենապատի, 1985թ կառուցված 4,35քմ մակերեսով հենապատի, 1998թ. կառուցված 1,94քմ մակերեսով պարիսպի և 1998թ. կառուցված 0,11քմ մակերեսով սյան նկատմամբ Վիկտոր Խաչատուրի Մարուքյանի /ծնվ. 15.05.1958 թ. / սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1 - ին կետում նշված հողամասից հատկացած 0,06հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Վիկտոր Խաչատուրի Մարուքյանին, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0,04955հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Վիկտոր Խաչատուրի Մարուքյանի սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ. Դարպաս 1 փողոց թիվ 75 բնակելի տուն:
6. Հողամասում առկա է ինքնակամ կառուցված 19,12քմ մակերեսով կիսակառույց շինություն և ժամանակավոր տնակ:
7. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. Լոռու մարզային ստորաբաժանումում:

Կ.Տ.

Դ Ա Ր Պ Ա Ս
համայնքի ղեկավար՝ Ա.Ալոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, (0322) հեռ. 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» ապրիլի. 2016թ. N 31.

## 06-033-0048-0018 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՑՅՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏԱՎԱԶ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակարավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգր-քի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետով, Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհա-տական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով , ՀՀ ՀՕ 60-րդ ր 64-րդ հոդվածով, Ինքնակամ կառուցված շենքի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 28-ի թիվ 2387-Ն որոշմամբ,*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-033-0048-0018 ծածկագրի տակ գտնվող 0.08149հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1974թ. կառուցված 32.19քմ. նկուղի, 223,8քմ. մակերե-սով բնակելի տան, 45.25քմ. տնտեսական սենյակի, 17.85քմ. բաղնիքի, 1980թ. կառուցված 55.33քմ. ավտոտնակի, 1988թ. կառուցված 36.21քմ. օժ. շինության, 1990թ. կառուցված 4.44 քմ. հարթակի և 18.39քմ. տնտեսական սենյակի նկատմամբ Արտավազ Վարդանյանի /ծնվ. 1943թ. / սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ. Դարպաս 3 փողոց 3 նրբ. թիվ 9 բնակելի տուն:
5. Հողամասում առկա է ինքնակամ 2008թ. կառուցված 10.51քմ. մակերեսով բնակելի տուն և 18.75քմ. բաց պատշգամբ:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. Լոռու մարզային ստորաբաժանումում:

Դ Ա Ր Պ Ա Ս
համայնքի ղեկավար՝ Ա.Ալոյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե 3 փող. 5,

Հեռախոս՝ 0322 60624
Էլ.Փոստ՝ darpas.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 28» ապրիլի 2016 թվականի N 32

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Դարպաս համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Դարպաս համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Դարպաս համայնքի ղեկավարը որոշում է.

Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Դարպաս համայնքի ղեկավարի
2016 թվականի ապրիլի 28-ի N 32 որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Դոդոյան Արամայիս Հայկազի - 15000 (տասնհինգ հազար) դրամ,

2) Բեգլոյան Հայկանուշ Ժորիկի - 15000 (տասնհինգ հազար ) դրամ,

3) Դանիելյան Էմմա Իսմանդարի- 30000 (երեսունսուն հազար) դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 60000 ( վաթսուն հազար ) դրամ:

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասց. 3 փող. 5
Հեռախոս 6-06-24, էլ. փոստ darpas.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 02 » մայիսի 2016թվականի N 33

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և հիմք ընդունելով Դարպաս համայնքի ավագանու 2016թվականի ապրիլի 15-ի «Դարպաս համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին» թիվ 16-Ն որոշումը.

Որոշում եմ.

Հաստատել Դարպաս համայնքի 2016 թվականի բյուջեի 2-րդ և 3-րդ եռամսյակների մուտքերի և ծախսերի համամասնությունները հետևյալ կերպ.

1. Մուտքային մաս.

ա) կիսամյակում հողի հարկի նախատասված 801.1 հազար դրամի փոխարեն նախատեսել 1001.1 հազար դրամ, ինը ամսվա կտրվածքով նախատեսված 1000.0 հազար դրամի փոխարեն նախատեսել 1200.0 հազար դրամ:

բ) կիսամյակում աղբահանության վճարի համար նախատեսված 600 հազար դրամի փոխարեն նախատեսել 900 հազար դրամ, ինը ամսավ կտրվածքով նախատեսված 1000.0 հազար դրամի փոխարեն նախատեսել 1300.0 հազար դրամ:

2. Ծախսային մաս - գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, հոդված 4251 երրորդ եռամսյակում նախատեսված 1500000 ( մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը տեղափոխել երկրորդ եռամսյակ:

Դարպաս
Համայնքի ղեկավար Ա.ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔ 3 ՓՈՂ. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

,, 03 ,, մայիսի 2016թ. N 34.

*ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 06-033-0070-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱԿՏԱՆՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ.*

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով , ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի » 188 հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 2-ի 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 08.06.2001թ. հաստատված թիվ 708882 սեփականության իրավունքի գրանցման վկայականը, «Գ. Վեքիլյան» ԱՁ-ի կողմից 29.04.2016թ. կազմած հատակագիծը և Ռիտա Ավետյանի դիմումը.

որոշում եմ

1. Ռիտա Ավետյանի (ծնվ. 1949թ.) կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում, այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 2002թ. ինքնակամ կառուցված արտաքին չափերով 105.43քմ. բնակելի տունը և 2.24քմ մակերեսով ցանկապատը ճանաչել օրինական:

2. Քաղ. Ռ. Ավետյանի կողմից սույն որոշման 1-ին կետով նշված շենք, շինությունների օրինականացման համար սահմանված՝ 138810 ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Հաստատել վերը նշված բնակելի տան փոստային հասցեն՝ գ.Դարպաս 7 փող. 1 փակ 9 տուն:

ԴԱՐՊԱՍ
համայնքի ղեկավար Ա. ԱԼՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե 3 փող. 5,

Հեռախոս՝ 0322 60624
Էլ.Փոստ՝ darpas.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 04» մայիսի 2016 թվականի N 35

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով, Դարպաս համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Դարպաս համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Դարպաս համայնքի ղեկավարը որոշում է.

Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելված՝ 1,2:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Դարպաս համայնքի ղեկավարի
2016 թվականի մայիսի 04-ի N 35 որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Լուիզա Սարգսի Ալոյան- 15000 (տասնհինգ հազար) դրամ,

2) Յովիկ Վանիկի Ուտկին - 20000 (քսան հազար ) դրամ,

**ԸՆԴԱՄԵՆԸ՝ 35000** ( երեսունհինգ հազար ) դրամ:

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Դարպաս համայնքի ղեկավարի
2016 թվականի մայիսի 04-ի N 35 որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Նաթելա Խաչատուրի Անտոնյան- 10000 (տաս հազար) դրամ,

2) Յովհաննես Մկրտչի Կոբայյան - **10000 (տաս հազար ) դրամ,**

ԸՆԴԱՄԵՆԸ՝ **20000** ( քսան հազար ) դրամ:

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Յայաստանի Յանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե գ. Դարպաս 3փող. 5
հեռ. 0322 6-06-24

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 10 » մայիսի 2016թվականի N 36

ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ՝ Լ.ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՔԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 173 հոդվածով և հիմք ընդունելով Լիանա Առաքելյանի դիմումը.

Որոշում եմ.

Դարպասի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ՝ (3.3-1) Լիանա Գրիգորի Առաքելյանին տրամադրել երեխայի խնամքի արձակուրդ մինչև երեխայի երկու տարին լրանալը՝ 2016 թ-ի մայիսի 10-ից մինչև 2018 թ-ի փետրվարի 09-ը ներառյալ:

Դարպաս
համայնքի ղեկավար

Ա.Ալոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, հեռ. 6-06-24

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» մայիսի 2016 թ. N 37

## *ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 2015-2016թթ. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17 կետով, համաձայն Դարպաս համայնքի ավագանու թիվ 16-Ն որոշման, կայացած 15.04.2016թ-ին բյուջեի գործառնական դասակարգման բաժին 9, խումբ 2, դաս 2, ծրագիր 51, հոդված 4729 նախատեսված միջոցներից.

Դարպաս համայնքի ղեկավարը որոշում է.

Դարպաս համայնքի միջնակարգ դպրոցի 2015- 2016թթ. շրջանավարտներին «Վերջին զանգի » կապակցությամբ տրամադրել դրամական աջակցություն.

1. Աբրահամյան Արայիկ Վասիլի - 4440 դրամ
2. Աբրահամյան Վոլոդյա Տիգրանի - 4440 դրամ
3. Աջամյան Աննա Գագիկի - 4440 դրամ
4. Ասլամազյան Քրիստինե Սմբատի - 4440 դրամ
5. Ասլանյան Նարեկ Սարգսի - 4440 դրամ
6. Ավետյան Անդրանիկ Վահանի - 4440 դրամ
7. Ավետյան Լիա Արամայիսի - 4440 դրամ
8. Ավետյան Նարեկ Մամիկոնի - 4440 դրամ
9. Դոդոյան Համիկ Կարենի - 4440 դրամ
10. Զաքարյան Դիանա Ռուբենի - 4440 դրամ
11. Զոհրանյան Ալլա Նորիկի - 4440 դրամ
12. Խաչատուրյան Օգսաննա Ստեփանի - 4440 դրամ
13. Կարապետյան Կարեն Մարատի - 4440 դրամ
14. Հարությունյան Ալեն Համայակի - 4440 դրամ
15. Մնացականյան Մելինե Վահանի - 4400 դրամ
16. Ղախկլորյան Աննա Գագիկի - 4440 դրամ
17. Սարգսյան Ժորա Արշալույսի - 4480 դրամ
18. Սիմոնյան Լևոն Մանվելի - 4480 դրամ

Ընդամենը կազմում է՝ 80000 (ութսուն հազար) դրամ:

Կ.Տ. Համայնքի ղեկավար՝ Ա. Ալոյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, գ. Դարպաս

հեռ. (0322)6-06-24

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» մայիսի 2016 թվական N 38 - Ա

### ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝

Որոշում եմ՝

1. Ստեղծել համայնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողով հետևյալ կազմով՝

| | |
|---|---|
| 1. Վարդանյան Անահիտ | համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի նախագահ, |
| 2. Ջեյրոյան Հերմինե | համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի քարտուղար |
| 3. Աբրահամյան Լյուբա | համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ) |
| 4. Ավետիսյան Արտակ | համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ) |

2. Հանձնաժողովին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ղեկավարի 2016թվականի մայիսի 23-ի «Դարպասի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը և նրա գործառույթները սահմանելու մասին» N39-Ա որոշմամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Արմեն Ալոյան

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ

2016թ. մայիսի 23

գ. Դարպաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, գ.Դարպաս
հեռ.(0322) 6-06-24

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» մայիսի 2016 թվական N 39 - Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով, 51-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝

Որոշում եմ՝

Սահմանել Լոռու մարզի Դարպասի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը և նրա գործառույթները՝ համաձայն հավելվածի:

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱԼՈՅԱՆ

Կ.Տ

2016թ. մայիսի 23

գ. Դարպաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե 3 փող. 5,
Հեռախոս՝( 0322) 6-06-24
Էլ.Փոստ՝ darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26» մայիսի 2016 թվականի N 40

## ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Դարպաս համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Դարպաս համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ և հիմք ընդունելով նորածինի ծնողներից ստացված փաստաթղթերը՝

Դարպաս համայնքի ղեկավարը որոշում է.

Դարպաս համայնքի բյուջեի նախատեսված ծախսերից, համայնքում ծննդաբերությունը խրախուսելու նպատակով յուրաքանչյուր նորածինի համար ծնողներին հատկացնել միանվագ դրամական օգնություն յուրաքանչյուրին՝ 10.000 ( տաս հազար) դրամ:

1. Դոդոյան Հայկազ Արամայիսի - 10000 (տաս հազար) դրամ:
2. Նազարյան Վիլենա Մուշեղի - 10000 ( տաս հազար) դրամ

Ընդամենը կազմում է՝ 20000 (քսան հազար) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____________ Ա. ԱԼՈՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե 3 փող. 5,
Հեռախոս՝( 0322) 6-06-24
Էլ.Փոստ՝ darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26 » մայիսի 2016 թվականի N 41

## ՅԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Դարպաս համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Դարպաս համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ, հիմք ընդունելով հարազատին կորցրածի ընտանիքից ստացված փաստաթղթերը՝

Դարպաս համայնքի ղեկավարը որոշում է.

Դարպաս համայնքի բյուջեի նախատեսված ծախսերից հարազատին կորցրածի ընտանիքին հատկացնել դրամական օգնություն յուրաքանչյուրին՝20.000(քսան հազար) դրամ:

1. Դողրոյան Լեոնիկ Լյովայի - 20000 (քսան հազար) դրամ
2. Մկրտչյան Կիմա Հովհաննեսի - 20000 (քսան հազար) դրամ

Ընդամենը կազմում է 40000 (քառասուն հազար) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » մայիսի 2016 թվականի N 42.

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 և 38 հոդվածներով և ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումով*

որոշում եմ.

1. Դարպաս համայնքի 06-033-027-002 ծածկագրի, 0.149 հա սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 1 փող. տուն 47 փոստային հասցեն:
2. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » մայիսի 2016 թվականի N 43.

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 և 38 հոդվածներով և ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումով*

որոշում եմ.

1. Դարպաս համայնքի 06-033-056-005 ծածկագրի, 0.099 հա սեփական տնամերձ հողամասին տրամադրել 6 փող. 5 նրբ. 15 փոստային հասցեն:
2. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Յայաստանի Յանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հեռ. 6-06-24


# ՈՐՈՇՈՒՄ

« 27 » մայիսի 2016թ. N 44 .

## Ս.Ֆ.ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17 կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 160 հոդվածների և 219 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, ՀՀ Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշումով և հիմք ընդունելով Ս.Ֆ.Թովմասյանի դիմումը.

Որոշում եմ

1.Դարպաս համայնքի «Նախադպրոցական ուսումնական հաստատության» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Սիրանուշ Ֆելիքսի Թովմասյանին տրամադրել 2016 թ-ի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդը ս/թ հունիսի 01-ից մինչև ս/թ հուլիսի 05-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր:

2. Դարպաս համայնքի «ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սիրանուշ Թովմասյանին հիմնական արձակուրդային վճարից բացի, վճարել լրացուցիչ միանվագ դրամական պարգևատրում՝ 100 000 (հարյուր հազար) դրամի չափով:

3.Սիրանուշ Թովմասյանի արձակուրդում գտնվելու ժամանակ ժամանակավոր պաշտոնակատար նշանակել դաստիարակ՝ Արմենուհի Դավթյանին: Փոխարինելու ժամանակահատվածում Ա.Դավթյանին վարձատրել տնօրենի աշխատավարձի չափով:

Համայնքի ղեկավար՝ Ա.ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 30 » մայիսի 2016 թվականի** **N** 45

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 և 38 հոդվածներով և ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումով*

**որոշում եմ.**

1. Դարպաս համայնքի 06-033-028-037 ծածկագրի, 0.087 հա սեփական տնամերձ հողամասին տրամադրել 1 փող. 35 փոստային հասցեն:
2. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

<< 30 >> մայիսի 2016թ. թիվ _46_

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դարպաս համայնքի ավագանու 15.04.2016թ. թիվ 14 որոշումը համայնքում 2016 թվականի մայիսի 27-ին կայացած մրցույթի թիվ 1 արձանագրությունը, ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ պարբերությամբ, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Լոռու մարզի Դարպաս համայնքում 27.05.2016 թվականին կայացած մրցույթի թիվ 1 արձանագրությունը՝ մրցույթում հաղթող ճանաչված Կարեն Վասիլի Էղարյանին 99 տարի ժամկետով տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող 06-033-0238-087 ծածկագրով 0.31152 հա ջրային ֆոնդի հողերից լիճը, մրցույթում առաջարկված առավելագույն 5000 ՀՀ դրամ տարեկան վարձավճարի դիմաց:
2.Պարտավորեցնել Կարեն Էղարյանին 10 օրվա ընթացքում կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:
3.Որոշումից ծագող իրավունքները գրանցել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 01 » հունիսի 2016 թվականի N 47 .

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 և 38 հոդվածներով և ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387- Ն որոշումով*

որոշում եմ.

1. Դարպաս համայնքի 06-033-050-008 ծածկագրի, 0.122 հա սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 5 փող. 2 փակ տուն 6 փոստային հասցեն:
2. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔ 3 ՓՈՂ. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

.. 06 .. հունիսի 2016թ. N 48

*ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 06-033-0070-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱԿՏԱՆՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ.*

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով , ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի » 188 հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 2-ի 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 08.06.2001թ. հաստատված թիվ 708882 սեփականության իրավունքի գրանցման վկայականը, «Գ. Վեքիլյան» ԱՁ-ի կողմից 29.04.2016թ. կազմած հատակագիծը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով և Ռիտա Ավետյանի դիմումը.

որոշում եմ

1. Ռիտա Ավետյանի (ծնվ. 1949թ.) կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում, այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 2002թ. ինքնակամ կառուցված արտաքին չափերով 105.43քմ. բնակելի տունը և 2.24քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Քաղ. Ռ. Ավետյանի կողմից սույն որոշման 1-ին կետով նշված շենք, շինությունների օրինականացման համար սահմանված՝ 138810 ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի 2016թ-ի փետրվարի 1-ի թիվ 11 և 2016թ-ի մայիսի 3-ի թիվ 34 որոշումները:

4. Հաստատել վերը նշված բնակելի տան փոստային հասցեն՝ գ.Դարպաս 7 փող. 1 փակ. 9 տուն:

ԿՏ

ԴԱՐՊԱՍ
համայնքի ղեկավար Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 08 » հունիսի 2016 թվականի N 49.

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 և 38 հոդվածներով և ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387- Ն որոշումով*

որոշում եմ.

1. Դարպաս համայնքի 06-033-019-014 ծածկագրի, 0.167 հա սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 1 փող. տուն 24 փոստային հասցեն:
2. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 08 » հունիսի 2016 թվականի N 50.

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 և 38 հոդվածներով և ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387- Ն որոշումով և հիմք ընդունելով սեփականության իրավունքի տրվ. 24.05.2000թ N 0290008 վկայականը, «Գասպար Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից կազմած հողամասի հատակագիծը և Մարգարիտա Արմենակի Իգիթյանի դիմումը*

որոշում եմ.

1. Դարպաս համայնքի բնակչուհի Մարգարիտա Իգիթյանի 0.096 հա սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 7 փող. 1 փակ. 7տուն փոստային հասցեն:
2. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » հունիսի 2016 թվականի N 51.

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 և 38 հոդվածներով և ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387- Ն որոշումով*

որոշում եմ.

1. Դարպաս համայնքի 06-033-022-003 ծածկագրի, 0.397 հա սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 3 փող. 4 փակ. տուն 5 փոստային հասցեն:
2. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔ 3 ՓՈՂ. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„ 16 „ հունիսի 2016թ. N 52.

*ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 06-033-0070-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱԿՏԱՆՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

*Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով , ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի » 188 հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 2-ի 2387-Ն որոշմամբ, «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման» 01.06.2010թ. թիվ 186-Ն հրահանգի, Դարպաս համայնքի ղեկավարի կողմից 16.06.2016թ. հաստատված համաձայնագրով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով և հիմք ընդունելով 08.06.2001թ. հաստատված թիվ 708882 սեփականության իրավունքի գրանցման վկայականը, «Գ. Վեքիլյան» ԱՁ-ի կողմից 29.04.2016թ. կազմած հատակագիծը և Ռիտա Ավետյանի դիմումը.*

որոշում եմ

1. Ռիտա Ավետյանի (ծնվ. 1949թ.) կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում, այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 2002թ. ինքնակամ կառուցված արտաքին չափերով 105.43քմ. բնակելի տունը և 2.24քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:
2. Քաղ. Ռ. Ավետյանի կողմից սույն որոշման 1-ին կետով նշված շենք, շինությունների օրինականացման համար սահմանված՝ 138810 ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Հաշվի առնելով, որ Ռ. Ավետյանին սեփականության իրավունքով հատկացված հողամասը կադաստրային քարտեզում սխալ գծագրվելու արդյունքում իրավունքի պետական գրանցում է ստացել սխալ սահմանային չափերով և սխալ 0.08հա մակերեսով: Ուստի հիմք ընդունելով թիվ 0290008 և 708882 սեփականության իրավունքի գրանցված վկայականները, հաստատված հողամասի ճշտված հատակագծերը և համաձայնագիրը կադաստրային քարտեզում կատարել համապատասխան ուղղում և վերականգնել Ռ. Ավետյանի սեփականության իրավունքը 0.07037 հա տնամերձ հողամասի նկատմամբ:
4. Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի 2016թ-ի փետրվարի 1-ի թիվ 11, 2016թ-ի մայիսի 3-ի թիվ 34 և 2016թ. հունիսի 6-ի որոշումները:
5. Հաստատել վերը նշված բնակելի տան փոստային հասցեն՝ գ. Դարպաս 7 փող. 1 փակ. 9 տուն:
6. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը ուղղում կատարելու և փոստային հասցեն գրանցելու:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
համայնքի ղեկավար Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 16 » հունիսի 2016 թվականի** **N 53 .**

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 և 38 հոդվածներով և ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումով, «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման» 01.06.2010թ. թիվ 186-Ն հրահանգի, Դարպաս համայնքի ղեկավարի կողմից 16.06.2016թ. հաստատված համաձայնագիրը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով և հիմք ընդունելով սեփականության իրավունքի տրվ. 24.05.2000թ N 0290008 վկայականը, «Գասպար Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից կազմած հողամասի հատակագիծը և Մարգարիտա Արմենակի Իգիթյանի դիմումը*

**որոշում եմ.**

1. Դարպաս համայնքի բնակչուհի Մարգարիտա Իգիթյանի 0.096 հա սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել՝ 7 փող. 1 փակ. 7տուն փոստային հասցեն:
2. Գրանցված իրավունքին և «Գ. Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից 03.06.2016թ. կազմած հողամասի հատակագծին համապատասխան կադաստրային քարտզում կատարել ուղղում հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 16.06.2016թ. թիվ 52 որոշմամբ (070-002 ծածկագրով հողամասի սահմանային չափերը ուղղելու վերաբերյալ) և երկու կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա:
3. Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի 08.06.2016թ. թիվ 50 որոշումը:
4. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը ուղղում կատարելու և փոստային հասցեն գրանցելու:

ԿՏ. ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » հունիսի 2016 թվականի N 54

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.02.2016թ. ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածով*

որոշում եմ

Դարպաս համայնքի ղեկավարի 08.02.2016թ. թիվ 14 որոշման 2-րդ կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ. « Անշարժ գույքը գտնվում է ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում»:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, հեռ.. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » հունիսի 2016թ. N 55

*ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37, 38-րդ հոդվածներով , ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, 60-րդ հոդվածով, 118 հոդվածով, ՀՀ կառավառության 29.12.2005թ. փոստային հասցե տրամադրելու 2387-Ն որոշմամբ Առ ու ծախի պայմանագիրը, մուտքի դրամարկղի օրդերը, ժողովի որոշումից քաղվածքը, ՄԵԼ և ՄԻԼ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը: Ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը 22/06/2016թ. սեղանամատյան թիվ 3340, Սեփականության իրավունքի վկայագիրը 22/06/2016թ. սեղանամատյան թիվ 3341, ՀՀ կառավարության 24.11.2005թ թիվ 2346-Ն որոշումը Դարպաս համայնքին անհատույց սեփականության իրավունքով հողերի փոխանցման վերաբերյալ:

Դարպասի գյուղապետարան են դիմել քաղաքացիներ Անուշավան Հմայակի Ավետյանը ծնվ. 17.01.1988թ և Էդիչկա Արամի Ծատուրյանը ծնվ. 02.07.1939թ իրենց պատկանող Դարպաս համայնք 4 փողոց թիվ 12 փոստային հասցեում գտնվող անշարժ գույքի սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու և հողամասի գլխավոր հատակագիծը հաստատելու խնդրանքով: Գյուղապետարանի հողօգտագործման բաժնի ուսումնասիրությունից պարզվում է, որ շինությունների կառուցման և սպասարկման համար հատկացված է եղել 0.6878հա հողամաս և նշված օբյեկտի սպասարկման հողամասի սահմանների փոփոխություն կառուցման պահից մինչ օրս տեղի չի ունեցել, ըստ որի էլ փաստացի չափագրման կազմում է 0.78442հա: Հողամասը երբևէ հետ չի վերցվել գյուղապետարանի տնօրինության տակ, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ՀՕ 64-րդ հոդվածի 16-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ՀՕ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ 01.10.2005թ. թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի պահանջներով:

Ո ր ո շ ու մ եմ.

1. Վերականգնել 0.6878հա մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողամասի նկատմամբ Անուշավան Հմայակի Ավետյանի և Էդիչկա Արամի Ծատուրյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

2.Արտադրական նշանակության շինությունների զբաղեցրած 0.78442հա հողամասը համապատասխանում է ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ուստի ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետով վերականգնել Անուշավան Հմայակի Ավետյանի և Էդիչկա Արամի Ծատուրյանի հողհատկացման հիմքերը 0.78442հա. մակերեսի չափով, որը օրենքի ուժով սեփականության իրավունքով /պայմանով/ փոխանցվում է Անուշավան Հմայակի Ավետյանին և Էդիչկա Արամի Ծատուրյանին:

3.Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4.Անշարժ գույքին տրամադրվում է փոստային հասցե 4 փողոց թիվ 12:

5.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

Կ.Տ Համայնքի ղեկավար՝ Ա. Ալոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գ. Դարպաս

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » Հունիսի 2016 թվականի N 56

## 06-033-0035-0043 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐԳԻՍ ՄԻՆԱՍԻ ԻԳԻԹԲԱՇՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Ս. Իգիթբաշյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 04,04,1991թ. թիվ 2 որոշումը, ՄԵԼ և ՄԻԼ գեոդեզիային և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-033-0035-0043 ծածկագրի տակ գտնվող 0,014հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի նկատմամբ Սարգիս Մինասի Իգիթբաշյանի /ծնված 1968թ./ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Սարգիս Մինասի Իգիթբաշյանի /ծնված 1968թ./ սեփականության իրավունքը:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 2 փողոց, 7 նրբ., 34:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար Ա. Ալոյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե գ.Դարպաս 3 փող. 5 շ.
Հեռախոս՝ 0322 60624
Էլ.Փոստ՝ darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունիսի 2016 թվականի N 57

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՄԻԿ ԴՈԴՈՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Համիկ Դոդոյանի 2016 թվականի հունիսի 30-ի հայտը, ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Դարպաս համայնքի 3 փողոց 18 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Համիկ Դոդոյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա.ԱԼՈՅԱՆ

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե գ.Դարպաս 3 փող. 5 շ.,

Հեռախոս՝ 0322 60624
Էլ.Փոստ՝ darpas.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունիսի 2016 թվականի N58

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՆԻԿ ՄԱՄԱՋԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մանիկ Մամաջանյանի 2016 թվականի հունիսի 30-ի հայտը, ղեկավարվելով .Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Դարպաս համայնքի 1 փողոց 9 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Մանիկ Մամաջանյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա.ԱԼՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե գ.Դարպաս 3 փող. 5 շ.,

Հեռախոս՝ 0322 60624
Էլ.Փոստ՝ darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունիսի 2016 թվականի N 59

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐՈՒՍՅԱ ԱՍԼԱՄԱԶՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մանիկ Մամաջանյանի 2016 թվականի հունիսի 30-ի հայտը, ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Դարպաս համայնքի 1 փողոց 71 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Մարուսյա Ասլամազյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա.ԱԼՈՅԱՆ

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե 3 փող. 5.

Հեռախոս՝ 0322 60624
Էլ.Փոստ՝ darpas.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

« 01» հուլիսի 2016 թվականի N 60

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Դարպաս համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Դարպաս համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 37 Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Դարպաս համայնքի ղեկավարը որոշում է.

Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Դարպաս համայնքի ղեկավարի
2016 թվականի հուլիսի 01 -ի N 60 որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Ջուլհակյան Սոնիկ Ռաֆիկի - 10000 (տաս հազար) դրամ,

2) Չիլինգարյան Անժաման Յուրիկի - 50000 (հիսուն հազար) դրամ,

3) Աբրահամյան Վրեժիկ Ժորայի - 20000 (քսան հազար) դրամ,

4) Դավթյան Արմենուհի Միշիկի - 70000 (յոթանասուն հազար) դրամ,

5) Փափախչյան Մարինետա Ռաֆիկի - 70000 (յոթանասուն հազար) դրամ,

6) Դոդոյան Արման Միսակի - 70000 (յոթանասուն հազար)դրամ,

7) Շահբազյան Անահիտ Սերյոժայի - 15000 (տասնհինգ հազար) դրամ,

8) Ասլամազյան Օֆիկ Գեղամի - 15000 (տասնհինգ հազար) դրամ,

9)Մարգարյան Արմինե Յուրիկի - 22000 (քսաներկու հազար )դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 342000 ( երեք հարյուր քառասուներկու հազար) դրամ:

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե գ. Դարպաս 3փող. 5շ.
հեռ. 0322 6-06-24


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 06 » հուլիսի 2016թվականի N 61

### Հ. Ա. ՋԵՅՐՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159, 161 հոդվածների, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, 31-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումով և հաշվի առնելով Հ.Ա. Ջեյրոյանի դիմումը.

Որոշում եմ.

1. Դարպասի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հերմին Ալբերտի Ջեյրոյանին տրամադրել 2016 թ-ի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները ս/թ հուլիսի 11-ից մինչև ս/թ օգոստոսի 11-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր:
2. Հերմին Ալբերտի Ջեյրոյանին հիմնական արձակուրդային վճարից բացի, վճարել լրացուցիչ միանվագ դրամական պարգևատրում՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:
3. Հերմինե Ջեյրոյանի արձակուրդում գտնվելու ժամանակ փոխարինող նշանակել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Արթուր Աբրահամյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հեռ.(0322) 6-06-24

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«03» մայիսի 2016 թ. N 08.

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 77 հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2003թ-ի մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշմամբ հաստատված կարգի 24, 47, 49 կետերով և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 02. 04. 2016թ-ի թիվ 101/111.3/2031-16 գրությունը.

Կարգադրում եմ

Հողամասի գույքի աճուրդային կարգով օտարումը և վարձակալության իրավունքով տրամադրումը կազմակերպելու համար ստեղծել մրցույթային և աճուրդային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ալոյան - համայնքի ղեկավար
Անդամներ՝ Է. Հախվերդյան – մարզպետարանի ներկայացուցիչ
Դ. Վարդանյան - համայնքի ղեկավարի օգնական
Ա. Վարդանյան - աշխ.առաջատար մասն.-հաշվապահ
Ա. Աբրահամյան- աշխ. առաջին կարգի մասնագետ
Ս. Կիրակոսյան - ավագանու անդամ

Դարպաս համայնքի ղեկավար Ա. Ալոյան